ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1956 Общественные науки

Հ. Համբարձումյան

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հին Հայաստանում ստրկատիրական սիստեմի գոյության պրոբլեմը մեր պատմագրության մեջ շարունակում է մնալ խիստ ակտուալ, չնայած տեսականորեն այդ հարցին, համենայն դեպս, կարելի է պատասխանել միայն դրական կերպով։ Ստրկատիրական ֆորմացիան ժխտողները վկայակոչում են հեղինակավոր մարդկանց (հանգուցյալ ակադեմիկոս Գրեկովին և այլոց), ելնում են «ստրուկ» բառի իրավաբանական հասկացությունից, մատնանշում են Արևելքի պատմությունը և այլն։ Ընդհակառակը, հին Հայաստանում ստրկատիրական ֆորմացիայի առկայությունը հաստատողները բերում են հակառակ փաստարկներ, մատնանշում են Կովալյովի, Երեմյանի և ուրիշների աշխատությունները։ Ցանկանալով այդ հարցի վերաբերյալ մեծ պատասխանատվություն վերցնել մեզ վրա, մենք ցանկանում ենք միայն մի շարք նկատառումներ բերել հին Հայաստանում ստրկատիրական սիստեմի գոյության օգտին։

Ակադեմիկոս Գրեկովը, որը միանգամայն հեղինակավոր է այս հարցերում, ասում է. «Սլավոնները, գերմանները, արարները, հայերը, իբերները և միջնադարի մյուս ժողովուրդները, որոնք նախնադարյան-համայնական կարգերից անցել էին ֆեոդալիզմին, ստրկատիրական կարգեր չեն ապրել, թեև նրանք շատ լավ գիտեին ստրկությունը, որպես մարդու շահագործման ձևերից մեկը»[1]։ Այնուհետև, այդ նույն հեղինակը իր մի այլ աշխատության մեջ գրում է. «Անտիկ ժամանակաշրջանի և միջնադարի սահմանագծում սլավոններն ունեին տառացիորեն այն նույն հասարակարգը, որը այնքան բնորոշ է հին գերմանների, հայերի, իբերների և այլ երիտասարդ ժողովուրդների համար, որոնք իրենց պետությունները կազմել էին նոր արտադրական բազայի վրա, հիմքում դնելով գյուղացիական համայնքը»[2]։ Այդ պնդումը ճիշտ չէ։ Դա հերքվում է, նախ՝ հենց իր՝ հեղինակի կողմից, երբ նա անում է հետևյալ վերապահումը՝ «...թեև նրանք (այսինքն՝ իբերները, հայերը, արարները և ուրիշ.— Հ. Հ.) շատ լավ գիտեին ստրկությունը, որպես մարդու շահագործման ձևերից մեկը»։ Այսպիսով, Գրեկովի կոնցեպցիան կարելի է պատկերացնել, նրա իսկ խոսքերով, հետևյալ կերպ՝ «Սլավոնները, գերմանները, արարները, հայերը, իբերները ստրկատիրական կարգեր չեն ապրել, թեև նրանք շատ լավ գիտեին ստրկությունը»։ Հարց է ծագում՝ ինչո՞ւմն էր ստրկության, որպես մարդու շա-

---

[1] *Греков*, Киевская Русь, 1949, стр. 110.
[2] *Греков*, Борьба Руси за создание своего государства, 1945, стр. 16.

հագործման ձևերից մեկի, այդ «շատ լավ գիտենալը»։ Արդյոք այդ «շատ լավ գիտենալը» հանդիսանում էր գուտ ճանաչողական երևույթ, որպես էրուդիցիայի և իրազեկության տարր, թե՞ նշանակում էր ստրկության պրակտիկա, տվյալ գործուն ինստիտուտի սովորական գոյություն։

Հին հայերի մոտ ստրկատիրական սիստեմը ժխտողները, ելնելով «ստրուկ» հասկացությունից, պնդում են, որ «ստրկատիրական ֆորմացիայի կողմնակիցները «ստրկություն» հասկացության տակ մտցնում են ոչ միայն ստրուկներին՝ այդ բառի իսկական իմաստով, այլև կախյալ ու կիսանկախ և նույնիսկ ազատ հողագործներին, որոնք աշխատում էին թագավորական, տաճարների և մասնատիրական հողերի վրա»[1]։ Վկայակոչվում է պրոֆեսոր Կովալյովը, որի կարծիքով՝ «ընդհանուր առմամբ հելլենիզմի դարաշրջանում տեղի է ունեցել ստրկության, որպես տնտեսական սիստեմի հետագա զարգացումը։ Ստրկությունը հանդես է գալիս երկու ձևով՝ ստրկության «մաքուր» (կամ «կլասիկ») ձևով, երբ ստրուկը, որպես կանոն, հանդիսանում է օտարացեղ, բոլորովին զրկված է արտադրության միջոցներից, սոսկ իր, ապրանք, արտադրության գործիք է ծառայում, և Արևելքում «պետական ստրկության» («ճորտատիրության») ձևով, երբ ստրուկը պատկանում է հենց նույն պետության հպատակների թվին, կարող է արտադրության միջոցներից մասամբ բաժին ունենալ և սոսկ արտադրության գործիք չի հանդիսանում, այլ ունի, համենայն դեպս անվանական կերպով, որոշ քաղաքացիական իրավունքներ»[2]։ Պրոֆեսոր Երեմյանը պնդում է, որ Հայաստանում, գյուղական համայնքների հետ միասին, գոյություն ունեին մասնատիրական տնտեսություններ, որտեղ կիրառվում էր զանազան կատեգորիաների պատկանող ստրուկների աշխատանքը։

«Մեզ հասած աղբյուրները, — ասում է նա, — հնարավորություն են ընձեռում պնդելու, որ մինչֆեոդալական Հայաստանում, այսինքն հելլենիստական և ուշ հելլենիստական դարաշրջաններում (մ. թ. ա. IV դ. — մ. թ. IV դ.) կառավարող դինաստիան, ռազմա-ստրկատիրական ավագանին և քրմերի դասը ունեին մասնատիրական տնտեսություններ՝ ագարակներ ու դաստակերտներ, որտեղ հիմնական արտադրողները ստրուկներն էին»[3]։

Երեմյանի կարծիքով տաճարների ընդարձակ հողային տնտեսություններում կիրառվում էր ստրուկ-հիերոդուլների աշխատանքը։

---

[1] Տես *Я. А. Манандян*, Актуальные вопросы историографии древней Армении, „Историк-марксист", Москва, 1940, стр. 3—8.

[2] *Ковалев*, Предисловие к соч. Тарна—„Эллинистическая цивилизация", Москва, 1949, стр. 13—14.

[3] Տես *С. Т. Еремян*, О рабстве и рабовладении в древней Армении, „Вестник древней истории", 1950, № 1, стр. 21. Տես „Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху" („Известия АН Армянской ССР", 1948, № 11, „Развитие городов и городской жизни в древней Армении" („Вестник древней истории", 1953, № 3), „Проблема падения рабовладельческого общества и зарождения феодальных отношений в древней Армении" (сборник „Доклады советской делегации на XXIII международном конгрессе востоковедов в Кембридже", М., 1954, стр. 111—121), „Рабовладельческое общество древней Армении", автореферат на соискание ученой степени доктора исторических наук, М., 1953.

Ընդունելով, որ իբր թե հիերոդուլները եղել են սոսկ կախյալ հողագործներ կամ հնուց ի վեր տաճարներին պատկանող գյուղական համայնքների անդամներ, այդ հետազոտողներն ասում են. «Երեմյանն ընդարձակում է «ստրուկ» հասկացությունը, այն տարածելով կախյալ և կիսանկախ անձերի վրա, որպիսի հանգամանքի հետ ոչ մի կերպ չի կարելի համաձայնել։ Դեռ հռոմեական իրավունքը տվել է «ստրուկ» բառի ճշգրիտ սահմանումը։ «Servi res sunt» — ստրուկները իրեր են։ Ստրուկը հանդիսանում է ոչ թե իրավատեր սուբյեկտ, այլ օբյեկտ, ոչ թե „persone", այլ „res"։ Հռոմայեցիները ստրուկին դիտում էին որպես „instrumentum vocale — արտադրության խոսուն գործիք", և այնուհետև վկայակոչելով Բ. Ա. Ռանովիչին, տվյալ կարգի հետազոտողները փորձում են ապացուցել, որ հիերոդուլները եղել են ոչ թե ստրուկներ, այլ սոսկ տաճարական հողերի վրա ապրող կախյալներ, որոնք բահրա էին վճարում քուրմին։

Հենց այստեղ պետք է նշել, որ պատմաբանների և իրավաբանների ճնշող մեծամասնությունը միահամուռ կերպով ստրուկին դիտում է որպես իր, այնպես որ պրոբլեմի այս իսկ հասկացությունը գերիշխող է հանդիսանում և՛ պատմական, և՛ իրավաբանական գրականության մեջ։

Կովալյովի պնդման մեջ հակասություն կա. ինչ-որ «հրաշքով» ստացվում են երկու հակադիր, միմյանց փոխադարձաբար ոչնչացնող, դրույթներ, որոնց դեպքում «ստրուկ»-ը մաքուր, կլասիկ ստրկության իմաստով, լոկ իր, ապրանք, արտադրության գործիք է հանդիսանում և, ընդհակառակը, նա Արևելքում, պետական ստրկության իմաստով, պետության հպատակ է, կարող է գույք ունենալ և քաղաքացիական իրավունքներ վայելել։ Մի դեպքում ստրուկը — դա իր է, ապրանք, գործիք, բայց ոչ սուբյեկտ և ոչ էլ անձ, իսկ մյուս դեպքում նա իրավունքի սուբյեկտ է (պետության հպատակ), քաղաքացիական իրավունքներ և գույք ունեցող անձ։ Ինչպե՞ս կարող էր ստացվել նման մետամորֆոզան և հակադրությունը։

Մի պահ ենթադրենք, որ «ստրուկի»» սահմանումը տրամաբանորեն ճիշտ է և որ «ստրուկը» — դա իր է, ապրանք, գործիք, այլ ոչ թե անձ, ոչ թե սուբյեկտ։ Այդպիսի ենթադրության դեպքում ինչ արդյունքի կհասնենք։

Պլատոն փիլիսոփան ճանապարհորդության ժամանակ բռնվել էր ծովահենների կողմից, որոնք ցանկացել էին վաճառել նրան որպես ստրուկի։ Նշանակում է՝ ըստ քննարկվող թեորիայի, Պլատոնը անսպասելի կերպով դարձավ իր, որը կարող էին տնօրինել ծովահենները, բայց հետո ազատվելով, նա վերստին դարձավ անձ և փիլիսոփա։ Հռոմեական գրող Անդրոնիկոս Լիբիոսը, որպես ռազմագերի, ստրուկ է եղել. բայց այնուհետև ազատություն ստանալով, որպես ազատ արձակված, հռչակվեց իր գրական գործունեությամբ և դարձավ Հռոմի ականավոր մարդկանցից մեկը։ Հռչակավոր գրող, դրամատուրգ Պուբլիոս Տերենցիուսը, Աֆր (աֆրիկացի) մականվամբ, որպես աֆրիկական ստրուկ, վերադարձել էր Հռոմ և գտնվում էր սենատոր Տերենցիոս Գուկանի տրամադրության տակ, որը այնուհետև նրան ազատ արձակեց։ Նախկին ստրուկ Տերենցիուսը դարձավ դարաշրջանի ականավոր գրողներից մեկը։ Կարելի՞ է արդյոք ենթադրել, որ և՛ Անդրոնիկոս Լիբիուսը, և՛ Պուբլիուս Տերենցիուսը առաջ եղել են իր, իսկ հետո, ինչ որ հրաշքի շնորհիվ, կերպարանափոխվել և դարձել են անձ, իրավունքի սուբյեկտներ և գրողներ։

Հռոմում գոյություն ուներ ազատ արձակվածների ինստիտուտ։ Ազատություն ստացած ստրուկը դառնում էր ազատ արձակված (libertus libertinus)։ Ազատ արձակվածը ձեռք էր բերում քաղաքացիական և քաղաքական իրավունքներ, ստանում էր իր տոհմական կալվածքը. նրան թույլ էր տրվում մասնակցելու տոհմական պաշտամունքին։ Օրենքը խիստ փոխհարաբերություններ էր սահմանում լիբերտինի և նրա նախկին տիրոջ միջև։ Մի խոսքով՝ նա դառնում էր իրավատեր սուբյեկտ և անձ։ Քննադատվող կոնցեպցիայի համաձայն, մենք պետք է ենթադրենք, որ իրը, ինչ որ գերբնական կերպարանափոխության ճանապարհով, դառնում էր անձ, քաղաքացի և իրավատեր սուբյեկտ, որ, իհարկե, անիմաստ է։

Ազատ արձակվածների ինստիտուտ գոյություն է ունեցել նաև Իռլանդիայում։ Գերությունից փախած ստրուկները, XV դարից սկսած, ազատ էին ճանաչվում։ Բորիս թագավորի 1603 թվականի օրենքի համաձայն, բոլոր ճորտերը, որոնց տերը սովի տարիներին կհրաժարվի կերակրել նրանց, կարող են ազատագիր ստանալ։ Շույսկի թագավորի 1607 թվականի հրամանագրով սանկցիա է տրված այն ստրուկների համար ազատություն պահանջելու հայցին, որոնց տերերը նրանց չեն ամուսնացնում մինչև որոշ հասակը։ Կարող էին արդյոք իրերը (այսինքն՝ սարուկները, որոնք իր էին հանդիսանում) փախչել գերությունից և դառնալ ազատներ։ Կարո՞ղ էին արդյոք իրերն ամուսնության իրավունք ունենալ։

Արևելքի բոլոր հին պետություններում և անտիկ աշխարհում ստրուկները համարվում էին մեղսագիտակներ՝ նրանք մեղադրվում էին իրենց զանցանքների ու հանցագործությունների համար։ Ստրուկները պատասխանատվություն էին կրում իրենց հանցավոր գործողությունների համար և, դրան համապատասխան, պատժի էին ենթարկվում։ Համմուրաբիի օրենքներով սահմանված էր, որ ստրուկը պատասխանատվություն է կրում իր տիրոջը չհնազանդվելու համար և այս դեպքում, որպես պատիժ, կտրում էին նրա ականջը։

Գոյություն ունեն պատմական փաստեր ստրուկների ապստամբությունների մասին։ Նիմֆոդորը նկարագրում է Քիոս կղզում Դրամասի առաջնորդությամբ ստրուկների ապստամբության փաստը։ Հայտնի են ստրուկների ապստամբություններ Տյուրոսում, Սիրակուզայում, Սպարտայում և այլուր։ Հունաստանում ներքին պատերազմների ժամանակ ստրուկներն անցնում էին իրենց տերերի հակառակորդների կողմը։ Սիցիլիայում մեր թվականությունից առաջ II դարում (136—132 և 104—101 թթ.) տեղի են ունեցել ստրուկների խոշոր ապստամբություններ, իսկ 74—71 թթ. հռոմեական պետությունը ցնցվեց Սպարտակի առաջնորդությամբ տեղի ունեցած՝ ստրուկների մեծ ապստամբությունից։ Այն ենթադրությունից, թե ստրուկները իր էին հանդիսանում, չի կարելի ճիշտ եզրակացություն անել ստրուկների ապստամբության հնարավորության մասին, որովհետև իրերը չեն կարող բողոքել, խռովություն բարձրացնել, ապստամբվել։ Ստրուկների ապստամբության փաստը անհերքելիորեն վկայում է այն մասին, որ ստրուկներն ունեին իրավագիտակցություն, իրենց ճնշված վիճակի գիտակցություն ու ճնշմանը վերջ տալու և ազատություն ձեռք բերելու հնարավորության գիտակցություն։ Իր վիճակը գիտակցող մարդը չի կարող իր լինել։

Ստրուկը անձնավորություն էր հանդիսանում։ Նա տիրոջ հանդեպ (և պետության հանդեպ այնտեղ, որտեղ նա պետության սեփականություն էր ճանաչվում) պարտականության և իրավունքի սուբյեկտ է եղել։

Մարքսիզմը սովորեցնում է, որ դասակարգային հասարակությունն իր զարգացման սկզբնական ստադիայում հիմնվում էր ստրկատիրոջ սեփականության վրա, շարտադրության միջոցների վրա, ինչպես նաև արտադրության աշխատողի՝ ստրուկի վրա։ Ստրկությունն իր նահապետական ձևով ծագել և զարգացել է դեռևս նախնադարյան-տոհմատիրական կարգերի դարաշրջանում։ Ստրուկը իր ֆունկցիայով, որպես աշխատանքային պրոցեսի համար անհրաժեշտ ուժ, փաստորեն անջատված չէր արտադրության միջոցներից։ Բայց նահապետական ստրկության սիստեմում ստրուկի վիճակը համարյա չէր տարբերվում ընտանիքի անդամների վիճակից։ Այս դարաշրջանում ստրկությունը, դեռևս չկազմելով արտադրության հիմքը, ուղղված էր գոյության անմիջական միջոցների արտադրությանը։ Հունաստանում ստրկությունն սկսում է գործել դեռևս հոմերյան հասարակության մեջ, նահապետական-համայնական կացութաձևի քայքայման ժամանակ, երբ, Էնգելսի խոսքերով, ռազմագերիների ստրկությունն արդեն ճանաչված հիմնարկ էր։ Ստրուկի, որպես իր տիրոջ հանդեպ պարտականության սուբյեկտի, կլասիկ կերպար է Էվմեոսը, Վոդիսեսի հովիվը։ Անհեթեթություն կլիներ, կարդալով Վոդիսականը և Էվմեոսի բնավորության վառ նկարագրությունը, իր ճանաչել նրան. նա հանդես է գալիս որպես տիրոջ և նրա ընտանիքի հանդեպ պարտականության անխախտ կատարող։ Նրա կերպարը անհերքելի ապացույց է այն բանի, որ ստրուկը — դա իր չէ, այլ անձ և պարտականության սուբյեկտ։ Արիստոտելը ստրուկին բնորոշում էր որպես «շնչավոր գործիք»։ Շնչավոր լինելու հատկանիշն այս դեպքում, երբ մեծ մտածողը զարգացման հիմքում դնում էր ինքնաբավ «էնտելեխիայի» գաղափարը, վկայում է, որ փիլիսոփան ստրուկին համարում էր անձնավորություն։ Պլատոնը իր իդեալական պետության մեջ ստրուկների վրա էր դնում պետությունը պահպանելու և պաշտպանելու պարտականությունները։ Բայց ստրուկի բնութագրումը միանգամայն ճիշտ կերպով տվել է Մարքսը, և զարմանալի է, որ մեր պատմաբանները աչքաթող են արել նրա սահմանումը։ «Բանվորը, հին մարդկանց դիպուկ արտահայտությամբ, այստեղ որպես սոսկ instrumentum vocale (խոսքով օժտված գործիք) տարբերվում է կենդանուց որպես instrumentum semivocale (ձայնով օժտված գործիքից) և աշխատանքի անշունչ գործիքից որպես instrumentum mutum (համր գործիքից)։ Բայց ինքը բանվորը կենդանուն և աշխատանքի գործիքին զգալ է տալիս, որ ինքը նման չէ նրանց, որ ինքը մարդ է»[1]։

Մարքսի սահմանումից պարզորոշ երևում է, որ ստրուկը («բանվորը» արտադրության ստրկական սիստեմի ժամանակ) և՛ կենդանիներից, և՛ անշունչ իրերից տարբերվում է որպես մարդ։

Ստրուկն իր տիրոջ սեփականությունն էր և այդ ասպեկտով նա պարտավոր էր իր տիրոջ կամքը կատարել միշտ և ամեն դեպքում։

---

[1] *К. Маркс*, Сочинения, т. XVII, 1937, стр. 217.

Բացի իր անսահմանափակ պարտականություններից իր տիրոջ հանդեպ, ստրուկը հրեաների մոտ պարտավոր էր թլպատվել[1]։

Միդիայում և Պարսկաստանում ստրուկները պարտավոր էին պահպանել հոտը, մշակել հողը և զբաղվել առևտրով ու արդյունաբերությամբ. նրանք պարտավոր էին ծառայել բանակում։

Հնդկաստանում Մանուի օրենքները վկայում են ստրուկների և նրանց պարտականությունների գոյության մասին։ Չինաստանում ստրուկը, ինչպես վկայում են կայսերական հրամանագրերը, անձնավորություն էր ճանաչվում։ Այդպիսի հրամանագրերից մեկում ասվում է. «Երկնքի և երկրի արարածների մեջ ամենաազնիվը մարդն է... Նրանք, ովքեր սպանում են իրենց ստրուկներին, չեն կարող թաքցնել իրենց հանցագործությունը... Նրանք, ովքեր խարանում են ստրուկներին, կդատվեն օրենքով։ Խարանված ստրուկները կդառնան ազատ»։ Ասորեստանում, ինչպես ցույց են տալիս վավերագրերը, ստրուկներին երբեմն կոչել են omelu, այսինքն՝ մարդ, անձնավորություն։ Հունաստանում ստրուկները պարտավոր էին կատարել իրենց տիրոջ կամքը։

Արիստոֆանի կատակերգություններում ստրուկները բնութագրում են իրենց վիճակը և ծանր պարտականությունները. «Ա՜խ մարդ, այդ ինչ է քո կաշին։ Չլինի՞ թե խոզուկների մի ամբողջ բանակ է թափվել վրադ և ակոսել մեջքդ»։ Կամ նույն ոգով՝ «Օ՜, դու կրիա, ինչպե՜ս ես նախանձում եմ քո թեփուկին, որը պաշտպանում է մեջքդ»։ Հռոմում ստրուկների ծանր և անվերջ ու բազմազան պարտականությունները համակարգված էին և կազմում էին հարյուրավոր առանձին տեսակներ ու կատեգորիաներ։ Հոլանդացի գիտնական Պոմպան պարզել է, որ հռոմայեցի հարուստ ստրկատիրոջ տանը ստրուկները կատարում էին 146 առանձին ինքնուրույն պարտականություններ և ֆունկցիաներ։ Սակայն հետագայում ուսումնասիրողները գտան, որ ստրկատիրոջ տանը ստրուկների կողմից կատարված առանձին պարտականությունների ու ֆունկցիաների թիվը զգալի չափով գերազանցում էր Պոմպայի ցույց տված թվից։ Այս տվյալները բավարար հիմք են տալիս ընդունելու, որ ստրուկները եղել են պարտականության սուբյեկտներ։

Գոյություն ունեն մեծ քանակությամբ պատմական նյութեր, որոնցից կարելի է եզրակացնել, որ ստրուկներն իրենցից ներկայացրել են անձնավորություն և եղել են իրավունքի սուբյեկտներ։ Բոլոր երկրներում և բոլոր դարաշրջաններում ստրուկները օգտվել են կերակրի (սննդի) և հագուստի իրավունքից։ Ստրկական սիստեմի զարգացման տարբեր ստադիաներում ստրուկները մասնակիորեն օգտվում էին իրավունակությունից և իրագործում էին զանազան տեսակ իրավունքներ։

Չինաստանում ստրուկները, հիվանդանալու դեպքում, իրավունք ունեին խնամք ստանալու տիրոջից, որը պարտավոր էր սիրալիր լինել հիվանդ ստրուկների նկատմամբ և խնամել նրանց։

Բաբելոնում և Ասորեստանում ստրուկները կարող էին ունենալ ընտանիք և նույնիսկ մի քանի կին։ Նրանք խնայողությունների և դրանցից կազմված կապիտալների իրավունք ունեին։ Իսկ Նոր Բաբելոնում ստրուկ-

[1] Տես «Գիրք Ծննդոց», XVII, 12։

ները, օգտվելով իրենց խնայողություններից, զգալի հարստություններ էին կուտակում և իրավունք ունեին ինքնուրույն կերպով վարել գրամական գործեր, ձեռք բերել անշարժ գույք, ապրել իրենց սեփական տներում, մտնել ընկերությունների մեջ, մասնակցություն ունենալ ձեռնարկություններում և այլն։

Հրեաների մոտ Մովսեսի օրենքները մարմնի անվթարության իրավունք էին վերապահում ստրուկներին, և երբ ստրուկը խեղանդամ էր դառնում, ազատվում էր, իսկ ստրուկի սպանությունը հիմք էր ծառայում պատասխանատվության ենթարկելու տիրոջը[1]։ Ստրուկն իրավունք ուներ մասնակցելու պաշտամունքի ծեսերին ու տոնակատարություններին և օգտվում էր շաբաթօրյա հանգստից[2]։

Միդիայում և Պարսկաստանում ստրուկներին իրավունք էր վերապահվում տարվա մեջ ունենալ մի քանի ազատ օր։ Այդ օրերին նրանք ազատվում էին իրենց սովորական աշխատանքներից և իրավունք ունեին օգտվելու տիրոջ ծառայություններից։ Բեռ Հերոդոտը հաղորդում է, որ ստրուկներն այստեղ իրավունք ունեին անպատիժ մնալու իրենց առաջին զանցանքի համար։

Հունաստանում ստրուկներն իրավունք ունեին ինքնուրույն կերպով զբաղվելու արհեստներով, պայմանով, որ բահրա վճարեին տիրոջը, իսկ մնացած ամբողջ վաստակը պատկանում էր իրենց։ Դրա շնորհիվ, Աթենքում դեպքեր էին լինում, երբ ստրուկները, մեծ հարստություն ձեռք բերելով, թույլ էին տալիս պերճություն և շռայլություն։ Դեմոսթենի հոր արհեստանոցներում աշխատող ստրուկները պատրաստում էին սուսերներ և ամեն տարի տիրոջը վճարում էին 90-ական մին, մինչդեռ պատրաստված արտադրանքի արժեքը կազմում էր 190 մին։ Քսենոֆոնի պատմածից երևում է, որ Աթենքում ստրուկներն աչքի էին ընկնում հանդգնությամբ և անվեհերությամբ. նրանք ճանապարհները այլ քաղաքացիների չէին զիջում։ (Մարդկային վարքի մոտիվների տեսակետից հանդուգն և անվեհեր կարող է լինել այն մարդը, որն ունի իր իրավունքների և արժանիքների գիտակցություն)։ Աթենքում ստրուկներն ունեին սեփականություն (peculium) և այդ սեփականությունից օգտվելու իրավունք։ Նրանք տարվա մեջ որոշ օրեր ազատվում էին աշխատանքից։ Օրինակ՝ Դիոնիսիոս աստծու տոնի օրերին նրանք օգտվում էին աշխատանքներից ազատ լինելու և տիրոջ կողմից ծառայություններ ստանալու իրավունքից։ Իր տիրոջ վարվեցողությունից դժգոհ ստրուկն իրավունք ուներ պահանջելու, որպեսզի իրեն, վաճառելու միջոցով, ի տնօրինություն հանձնեն մի այլ տիրոջ։ Այն ստրուկը, որը դիմում էր պաշտամունքի զոհասեղանին կամ որևէ կերպ հպվում էր սրբազան առարկաներին, անձեռնմխելի լինելու իրավունք էր ձեռք բերում։

Հռոմում ստրուկները ճանաչվում էին որպես տիրոջ ընտանիքի անդամներ և հաճախ հանդիսանում էին նրա ընկերներն ու խորհրդականները, նրա հետ սեղան էին նստում և նրա հետ միասին կատարում էին կրոնական ծեսեր։ Նրանց իրավունք էր վերապահված ունենալու իրենց ընտանիքը, խնայողություններն ու սեփական գույքը (peculium)։ Հոր կամ պար-

[1] Տես նշից, XVI, 20։
[2] Տես երկրորդումն օրինաց, V, 14, XII, 12, XVI, 11, նշից, XII, 44. XX II, 11։

տատիրոջ իշխանությամբ ստրկության տրված ստրուկները պահպանում էին ազատածնի իրենց իրավունքը, անվան և ցեղի անվանման իրավունքը (այսինքն՝ ազատ քաղաքացու արտոնությունների իրավունքը)։ Ըստ 47 թվականի օրենքի (lex Claudii), այն ստրուկները, որոնց մասին տերը հոգ չէր տանում նրանց հիվանդության ժամանակ, իրավունք ունեին ազատություն ստանալու։ Servus publicus կատեգորիային պատկանող ստրուկները համարվում էին իրավունակ։ Նրանք իրավունք ունեին իրենց գույքի կեսը տնօրինել կտակով և կարող էին դատարանում պաշտպանվելու իրավունք ձեռք բերել։ Մեր թվականության II դարից սկսած, սոցիալ-տնտեսական տեղաշարժերի ընթացքում, երևան են գալիս servi casati կոչված ստրուկներ, որոնք ստրկատերերից հողամաս էին ստանում. նրանք ապրում էին իրենց տիրոջից առանձին, ամուսնանալու իրավունք էին վայելում և իրավունք ունեին տնօրինելու իրենց աշխատանքի արդյունքները։

Մենք կարող էինք փաստարկման նյութը բազմացնել ցանկացած չափով։ Սակայն բերվածն էլ բավական է ընդունելու համար այն պատմական փաստը, որ ստրուկները հանդիսացել են անձնավորություն և եղել են իրավունքի սուբյեկտներ։

Ստրկությունը «հին համայնական կենցաղը գերաճած բոլոր ժողովուրդների մոտ դարձավ արտադրության տիրապետող ձևը և վերջում եղավ նրանց քայքայման գլխավոր պատճառը»[1]։ Այս դրույթն ընդհանրական-պատմական նշանակություն ունի բոլոր ժողովուրդների ու երկրների տնտեսական ֆորմացիաները ճիշտ բացատրելու համար և բացառության տեղիք չի տալիս։ Ելնելով դրանից, պետք է ընդունել, որ հին Հայաստանում ևս գոյություն է ունեցել ստրկատիրական սիստեմ։

Գիտությունը պարզել է ստրկության ծագման աղբյուրները։ Նրա ծագման առաջին ու սկզբնական աղբյուրը հանդիսացել են պատերազմը և նրա հետևանքները՝ ռազմագերիները, որոնք ստրկացվում էին։ Առևտրի զարգացումը բերում էր ստրկության հաստատմանը. «Անտիկ աշխարհում,— Մարքսի խոսքերով,— առևտրի ազդեցության և վաճառականական կապիտալի զարգացման արդյունքը միշտ լինում է ստրկատիրական տնտեսությունը»։ Երկրում ստրկության առկայության դեպքում նրա ծագման լրացուցիչ աղբյուր է ծառայում ստրկական բնակչության բնական աճը։ Առևտրի և էկոնոմիկայի զարգացման հետ զարգանում է վարկային գործը, որը իրավահարաբերությունների սիստեմ է ստեղծում վարկատուի և պարտապանի միջև։ Այդ իրավահարաբերությունների զարգացման պրիմիտիվ ստադիաներում վարկատուն անվճարունակ պարտապանին դարձնում է ստրուկ։ Գրեթե բոլոր ժողովուրդների մոտ հանցագործները, իրենց կատարած որոշ հանցանքների համար, սովորութական իրավունքի կամ օրենքի սանկցիաների ուժով դարձվում էին ստրուկներ։ Անսահմանափակ հայրական իշխանությունն ընտանիքի անդամների նկատմամբ, ինչպես նաև տղամարդու իշխանությունը կնոջ և տան գլխավորինը «ընդոծինների» նկատմամբ, միշտ եղել են ստրկության ծագման աղբյուրը. ընտանիքի

[1] Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Երկեր, հատ. 14-րդ, էջ 183, 1931 (ընդգծումը մեզն է—Հ. Հ.)։

[2] *К. Маркс*, Капитал, т. III, изд. 8, 1936, стр. 298.

գլխավորը ի ստրկություն էր վաճառում երեխաներին, կնոջը և ընդհանրապես ընտանիքի անդամներին։ Մի շարք երկրներում օրենքը ստրուկներ էր դարձնում այն քաղաքացիներին, որոնք պետության հանդեպ իրենց պարտականությունները չէին կատարում։ Ստրկացնում էին նաև այն օտարերկրացիներին, որոնք խարեությամբ յուրացնում էին տվյալ պետության քաղաքացու իրավունքները։ Գանայք, որոնք իրենց բախտը կապում էին ստրուկների հետ և, չնայած բողոքին, չէին կտրում իրենց կապերը նրանց հետ, դարձվում էին ստրուկներ (օրինակ՝ Հռոմում)։ Վերջապես, որոշ երկրներում և որոշ ժողովուրդների մոտ գոյություն ուներ կամավոր ստրկություն։

Տրամաբանորեն, պետք է ընդունել, որ պատճառն ու հետևանքը կապակցված են միմյանց հետ, և անխուսափելի է հետևանքի երևալը, եթե առկա է նրա պատճառի ներգործությունը, և որ ստրկական սիստեմը անխուսափելիորեն պիտի ծագեր ու գործեր այնտեղ, որտեղ կային նրա ծագման աղբյուրները։

Հարցն այսպես դնելու դեպքում՝ հին Հայաստանում ստրկության և ստրկատիրական սիստեմի գոյության պրոբլեմը փոխարկվում է այն պատճառականության, այն աղբյուրների գոյության կամ չգոյության պրոբլեմին, որտեղից բխել և ծագել է ստրկությունը։ Այս տեսակետից, այն պնդումը, թե Հայաստանում չեն եղել ու գոյություն չեն ունեցել ստրկություն և արտադրության ստրկատիրական եղանակ, հավասարազոր է այն պնդմանը, թե հայ ժողովուրդը և Հայաստանի պետությունը, որը հազարամյակների պատմական գոյություն ունի, չգիտեին, թե ի՞նչ է պատերազմը, երբեք պատերազմներ չէին վարում և պատերազմական գործողություններ չէին ձեռնարկում թշնամիների դեմ, որովհետև, եթե պատմական իրականությունը ցույց է տալիս հակառակը, ապա այդ նշանակում է՝ Հայաստանում եղել են նաև պատերազմի հետևանքները, այսինքն ռազմագերիներ, որոնք դարձվում էին ստրուկներ։ Այնուհետև, այն պնդումը թե Հայաստանում ստրկություն և արտադրության ստրկատիրական սիստեմ չեն եղել, հավասարազոր է այն պնդմանը, որ հայ ժողովրդի և Հայաստանի պետության մեջ չի եղել ընտանիք՝ իր հայրական ահեղ իշխանության գլխավորությամբ, որ ողջ պատմության ընթացքում այնտեղ չի եղել առևտրատնտեսական շրջանառություն՝ կապված վարկի ու փոխատվության, վարկատուների ու պարտապանների, վաշխառության ու պարտաբեռնվածության և այլ ինստիտուտների գոյության ու գործառնության հետ, որ Հայաստանում երբեք չեն եղել հանցագործություններ և նրանց օրինական հետապնդումներ, որ Հայաստանում չի եղել ամուսնության ինստիտուտ՝ կնոջ նկատմամբ տղամարդու ահեղ իշխանությամբ և այլն։ Իսկ եթե, հակառակ այդպիսի պնդումների, հաշվի առնենք պատմությունը և ընդունենք։ որ հայ ժողովրդի և Հայաստանի պետության մեջ դարերից ի վեր եղել է ընտանիքը՝ հայրական ահեղ իշխանությամբ հանդերձ, որ այնտեղ, արդարև, գոյություն են ունեցել վարկը, փոխատվությունը, վաշխառությունն ու պարտաբեռնվածությունը, որ, ինչպես բոլոր ժողովուրդների մոտ, այնտեղ ևս կատարվում էին նաև ամուսնություններ՝ կնոջ նկատմամբ տղամարդու ահեղ իշխանության պայմանով, որ այնտեղ ևս, ինչպես և ամենուրեք, հանցագործները հետապնդվում և պատժվում էին, ապա այդ դեպքում

անհրաժեշտ կլինի ընդունել, որ այնտեղ եղել են (և չէին կարող չլինել) նաև այդ ինստիտուտների ներգործության անխուսափելի հետևանքները։ Իսկ նշված գործոնների ներգործության անխուսափելի հետևանքներ էին հանդիսանում երեխաների ու ընտանիքի մյուս անդամների, կանանց, պարտապանների և գատապարտված հանցագործների վաճառքն ու ստրկացումը։

Ստրկությունը Հայաստանում եղել է և չէր կարող չլինել, քանի որ այնտեղ եղել և գործել են ստրկություն առաջացնող պատճառները։ Իսկ եթե ստրուկների և ստրկության գոյության փաստը անսասան է, ապա, կնշանակի՝ ստրկությունը պետք է ունենար և իր ֆունկցիոնալ նշանակությունը, սեփականության (սեփականության ուժը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեփականատիրոջ անսահմանափակ կարգադրիչ իշխանությունը), այսինքն ստրկության ակտուալ, գործունյա կապվածություններ ստրկատիրոջ և արդյունաբերության հետ։ Այդ երկու ուժերի միացյալ գործողությունն էլ հենց ստեղծում է այն սիստեմը, որը կոչում են ստրկատիրական ֆորմացիա։

Ճիշտ է, Արևելքի ստրկատիրական սիստեմը որոշելիս և բնութագրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նրա այն սպեցիֆիկ առանձնահատկություններն ու յուրահատկությունը, որոնք սահմանված էն մարքսիզմի կլասիկների կողմից, բայց այս հանգամանքը բնավ և ամենափոքր չափով անգամ հիմք չի տալիս Արևելքի որևէ երկրում տվյալ սիստեմը ժխտելու։ Արևելքի պետությունների բնակչությունը, որը դարերի ընթացքում պահպանել է համայնական կարգերը, առաջադրում է, ինչպես ցույց են տվել մարքսիզմի կլասիկները, «կենտրոնական կառավարությանը հոգալ նրանց հողագործության և առևտրի հիմնական պայմանները հանդիսացող հանրային խոշոր կառուցումների մասին», իսկ ինքը իր հերթին և միաժամանակ կազմում է հողագործական և արդյունաբերական աշխատանքի միջև ընտանեկան կապի հիման վրա գոյություն ունեցող մանր կենտրոններ։ Այդ աղբյուրը ստեղծել է այսպես կոչված համայնական սիստեմ (village system), որը այս մանր միություններից յուրաքանչյուրին հաղորդել է անկախ կազմակերպություն և առանձին յուրահատուկ կյանք[1]։ Այս դրույթներն անվիճելի են։ Սակայն, եթե անփոփոխելի ճշմարտություն համարենք, որ Արևելքի տնտեսական կարգը բնութագրվում է խիստ արտահայտված յուրահատկությամբ և ունի սպեցիֆիկ առանձնահատկություններ, ապա դրանով չի հերքվում ոչ մարքսիզմի հիմնական, ընդհանրական նշանակություն ներկայացնող դրույթը, թե առաջին դասակարգային հասարակությունը, որ ծագել է ստրկատիրոջ՝ արտադրության միջոցների և արտադրության աշխատողի սեփականության հիման վրա, ստրկատիրական հասարակություն է և որ համայնական-տոհմատիրական կարգերի քայքայումից անմիջապես հետո ծագում և զարգանում է ստրկական սիստեմը, — ոչ էլ պատմականորեն սահմանված այն փաստը, որ Արևելքի բոլոր երկրներում (Հնդկաստանում, Չինաստանում, Ասորեստանում ու Բաբելոնում, Միդիայում ու Պարսկաստանում, Եգիպտոսում, Խեթական պետության մեջ և այլուր) գոյություն է ունեցել և զարգացել է արտադրության ստրկատիրական սիստեմը։

Սրանից երեք հազար տարի առաջ Հայաստանը եղել է խեթա-

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IX, стр. 349.

կան պետության սիստեմում. հետագայում նա քաղաքական ու տընտեսական հարաբերությունների և հարևանության մեջ է եղել արևելյան մի շարք երկրների հետ (Ասորեստան, Միդիա, Պարսկաստան և այլն), որոնց մոտ գոյություն է ունեցել և գործել է ստրկական սիստեմը. ինչպես կարող էր պատահել, որ նա՝ Հայաստանը, խուսափեր արտադրության ստրկատիրական սիստեմից։

Հին Գերմանիայում գոյություն ունեին ստրուկներ և, հետևաբար, եղել և գործել է ստրկատիրական սիստեմ, որ ապացուցվում է գերմանական դիցարանության բովանդակությամբ։ Աղբյուրների վկայության համաձայն, այստեղ ստրուկներին վաճառում էին որպես գրաստներ, մորթում էին զոհաբերությունների ժամանակ, այրում էին տիրոջ խարույկի վրա, նրա հետ միասին թաղում էին մի գամբարանում։

Տակիտուսը իր «Գերմանիա»-ում մանրամասնորեն նկարագրում է ստրուկներին և ստրկատիրական սիստեմը։ Տվյալները ցույց են տալիս, որ այստեղ, բացի ռազմագերիներից, ստրկացվում էին նաև ազատ քաղաքացիները, որոնք շատ հաճախ իրենց ազատությունը տանուլ էին տալիս ոսկրախաղի մեջ։

Ստրկություն գոյություն է ունեցել նաև սլավոնական ժողովուրդների մոտ։ Չեխերի մոտ ստրուկների առք ու վաճառք տեղի ուներ Իրեչիսլավ I-ի օրոք, երբ, ի միջի այլոց, ստրկացվում էին անհավատարմության համար հանցավոր ճանաչվածները և անվճարունակ պարտապանները։ XII դարում հրեաները Պրագայում ստրուկների առևտուր էին անում, որ սարգելվեց Վացլավ I-ի կողմից։ Լեհաստանի սովորութական իրավունքի հիշատակարանները վկայում են, որ XIII դարում այստեղ գոյություն է ունեցել ստրկություն. այդ հիշատակարաններում պատմվում է ստրկուհիների (Dirne) մասին, որոնք առուծախի, օժիտ տալու և այլ գործարքի առարկա էին[1]։ Պոմորյան սլավոնների մոտ ստրկության գոյությունն ապացուցվում է այն տվյալներով, որ Կոտլյարևսկին բերել է իր „Книга о древностях и истории поморских славян в XII в". „Законник Душана" պատմական հիշատակարանի բովանդակությունից երևում է, որ սերբերի մոտ գոյություն է ունեցել ստրկություն[2]։ Վերջապես, ոչ մի կասկածի ենթակա չէ, որ անցյալում ռուս ժողովրդի մոտ, պատմության մինչմոսկովյան ժամանակաշրջանում և Մոսկովյան պետության դարաշրջանում գոյություն է ունեցել ստրկատիրական սիստեմ։ Այս գրույթն ապացուցվում է հին ռուսական իրավունքի հուշարձանի՝ „Русская правда"-ի բովանդակությամբ և բազմաթիվ վավերագրերով՝ հրամանագրերով, տարեգրություններով, օրենսդրական միջոցառումներով[3]։

Չի կարելի համաձայնվել Ա. Սամվելյանի հետևյալ հայացքների հետ։ «Ճորտ գյուղացիների՝ շինականների հետ մեկտեղ, շահագործվող դասակարգին էին պատկանում նաև ստրուկները։ Ստրկատիրական ինստիտուտի առկայու-

---

[1] Տես *Винавар*, Исследование памятников обычного права Польши.

[2] Տես *Зигель*, Законник Стефана Душана.

[3] Տես *Чичерин*, Опыты по истории русского права. Холопы и крестьяне в России до XVI в., *Ключевский*, Подушная подать и отмена холопства в России; *Сергеевич*, Вольные и невольные слуги московских государей; „Русские юридические древности". *Павлов—Сильванский*, Люди кабальные и докладные.

թյունը ֆեոդալական Հայաստանում այն պատմական մոմենտի մնացուկն է, երբ ստրկատիրությունը չէր աճել և դեռևս որոշ հասարակական-տնտեսական ֆորմացիայի ձև չէր ստացել։ Նա իր քարացած զարգացման պրիմիտիվ ձևով շարունակում էր որոշ տեղ գրավել ֆեոդալական հասարակության էկոնոմիկայում, որպես «ինականների շահագործվող հիմնական մասսային կից մի օգտակար հավելուկ»[1]։ Այս պնդման մեջ կան մի շարք անճշտություններ։ Ստրկության և ստրկատիրության ինստիտուտը Հայաստանում գոյություն է ունեցել և զարգացել է հազարամյակների ընթացքում, սկսած խեթական պետությունից և Հայասայից։ Ունենալով այդքան տևական ժամանակաշրջան և գտնվելով գործուն ֆունկցիաներ կատարելու վիճակում, ստրկատիրական սիստեմը չէր կարող չաճել մինչև համայնական-նախնադարյան ֆորմացիան, այնպես, ինչպես արգանդային լրիվ շրջանն անցած սաղմը չի կարող չբոլորել իր զարգացման շրջանը։ Հետևաբար, Հայաստանում ստրկատիրական սիստեմը ֆեոդալական դարաշրջանում չէր կարող պրիմիտիվ, քարացած ձևով հանդես գալ։ Բայց եթե մի պահ ենթադրենք, որ իսկապես այդ տեղի է ունեցել, ապա այդ դեպքում ռուդիմենտը չէր կարող «ինականների շահագործվող հիմնական մասսայի օգտակար հավելուկը» լինել, քանի որ ամեն մի մնացուկ, ամեն մի ռուդիմենտ իր ռուդիմենտարության զորությամբ դադարում է օգտակար լինելուց, արգելակ հանդիսանալով հետագա զարգացմանը։ Այնուհետև, ասելով, թե «շահագործող դասակարգին էին պատկանում նաև ստրուկները», հեղինակը, ինքը չնկատելով այդ, ընդունում է, որ ստրկատիրական սիստեմը գտնվում էր իր գործուն ֆունկցիայում, հետևաբար, նա չէր կարող լինել ստրկության հենարանը, ստրկություն, որի ֆունկցիոնալ նշանակությունը հենց արտադրական շահագործման պրոցեսի մեջ է։ Պետք է նկատել, որ նույն կոնտեքստում, մի փոքր հետո (էջ 363), հեղինակը ինքը թվարկում է Հայաստանում ստրկության գործուն կատեգորիաները, որով և իսկապես ընդունում է ստրկատիրական սիստեմի այն նույն ֆունկցիոնալությունը, որը ինքը ժխտում էր վերևում։

Ինչպես ցույց են տալիս պատմական տվյալները, Հայաստանում եղել են տաճարական ստրուկներ, «հիերոդուլներ», որոնց արտադրական շահագործումը լիովին համապատասխանում էր ստրկատիրական սիստեմի էությանն ու բնույթին, որ միանգամայն ճիշտ է հիմնավորվում Երեմյանի կողմից։ Իսկ Բոլտունովայի հայացքը, որ իբր թե «հիերոդուլները» ստրուկներ չեն հանդիսացել, այլ պարզապես, մարդիկ, որոնք բահրա էին վճարում քուրմին, քննադատության չի դիմանում. նախ՝ ստրուկներն էլ նույնպիսի մարդիկ էին, որոնք բահրա էին վճարում, երկրորդ՝ ըստ սակրալ իրավունքի աստվածածուկ սանկցիայի, ոչ միայն ստրուկներն էին համարվում բահրա վճարող մարդիկ, այլև բոլոր նրանք, ովքեր առնչություն ունեին պաշտամունքի հետ։

Ստրկատիրական սիստեմը ժխտող հետազոտողների սխալների մասին։

Առաջին։ Այդ կարգին պատկանող բոլոր հետազոտողներն ընդունում են, որ Հայաստանում եղել և գոյություն են ունեցել ստրուկներ ու ստրը-

[1] Ե. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, Արմֆանի հրատ., 1939, էջ 363։

կություն, բայց դրա հետ միաժամանակ պնդում են, որ այդ ստրկությունը, թեպետև նա գոյություն է ունեցել, չի հասել այն զարգացման, որով բնութագրվում է արտադրության ստրկատիրական սիստեմը։ Այդ պնդումը ճիշտ չէ հասարակական ֆորմացիաների պատմական, ֆունկցիոնալ նշանակության տեսակետից։ Ստրուկները և ստրկությունը հին Հայաստանում գոյություն են ունեցել հազարամյակների ընթացքում։ Նրանց գոյությունը պայմանավորված է եղել արտադրական ֆունկցիայի զարգացմամբ։ Չի կարելի ենթադրել ստրկության բազմադարյան զարգացում, առանց նրա կեցությունը պայմանավորող արտադրական ֆունկցիաների զարգացման։ Ենթադրելով, որ ստրկության արտադրական ֆունկցիաները չեն աճել, չեն զարգացել մինչև արտադրության ստրկատիրական սիստեմի առաջացման աստիճանը, մենք պետք է տրամաբանորեն ենթադրենք, որ այդպիսի իրադրության պայմաններում ստրկությունն ինքը պիտի ատրոֆիայի ենթարկվեր և բոլորովին անհետանար, մի բան, որ բացահայտորեն հակասում է պատմական իրողությանը։

Երկրորդ։ Ուսումնասիրողները, որոնց վերաբերում է մեր քննադատությունը, ուշադրության չեն առնում այն, որ ֆեոդալական կարգերի հիմնադրույթների գենեզիսը իր ակունքներով օրգանապես կապված է ստրկատիրական սիստեմի հետ, որ աշխատանքի շահագործման վրա հիմնված արտադրության հիմքը դրվել է ստրկատիրության սիստեմում և որ ֆեոդալիզմի ժամանակ շահագործված կախյալ գյուղացիների՝ «շինականների» իրավական և հասարակական վիճակը, հիմնականում, որակապես հար և նման է ստրկության զարգացման բարձր ստադիայի ժամանակ եղած ստրուկների, օրինակ՝ Հռոմում servi casati կոչված ստրուկների, իրավական ու հասարակական վիճակին։ Մարքսն ասում էր, որ հոմերյան էպոսում վերարտադրված է մարդկության մանկությունը։ Այդ համանմանությամբ կարելի է պնդել, որ ստրկական սիստեմում վերարտադրվում է ոչ միայն աշխատանքի շահագործման վրա հիմնված ամեն մի արտադրության մանկությունը, այլև այդ արտադրության սկզբնավորումն ու սաղմերը։ Առանց սաղմնավորման ու բեղմնավորման պրոցեսների չի կարող պտուղ և ծնունդ լինել։ Կարելի է պնդել, որ ամեն մի շահագործական արտադրության սաղմնավորումն ու բեղմնավորումը տեղի են ունեցել ստրկատիրական սիստեմում, և միայն հետագայում, վերջինիս հիմքի վրա և նրա մեջ պարունակված հակասությունների հետևանքով, ծագել են հետագա հասարակական-տնտեսական ֆորմացիաները։ Հնագարյան Հայաստանի ստրկատիրական սիստեմը ժխտողները վաստորեն ճգնում են ապացուցել պտղի ու նրա ծննդի (և դեռ նրա հասուն հասակի էլ) առկայությունը, առանց սաղմնավորման ու բեղմնավորման պրոցեսների, նրանք փորձում են հիմնավորել ֆեոդալական սիստեմի ծնունդն ու աճումը, ժխտելով նրա սաղմնավորման ու բեղմնավորման պրոցեսները։

Երրորդ։ Քննարկվող կատեգորիայի ուսումնասիրողները իրենց եզրակացությունների համար սովորաբար ելակետային նախադրյալներ են համարում ֆեոդալական սիստեմին վերաբերող և մինչև մեր օրերը հասած մի շարք լեզվական հասկացությունների ու տերմինների քննախոսությունը։ Այսպես, օրինակ, Ա. Սամվելյանը ելնում է «շինական» տերմինի մեկնաբանությունից. Ն. Ադոնցը ելնում է «նախարար», «ազատ», «ոստանիկ» և

այլ հասկացություններից, Հ. Մանանդյանը զեկավարվում է «նախարար», «ազատ», «ոստանիկ», «խոստակ», «նահապետ», «ռամիկ», «սեպուհ», «պայազատ» և այլ տերմինների քննախոսությամբ, ըստ որում այդ ուսումնասիրողներից ամեն մեկը տվյալ տերմիններից յուրքանչյուրի համար սահմանում է միայն մեկ, իբր թե հաստատագրված ու անփոփոխ «բովանդակություն ու նշանակություն» և այդ տերմինի մեկ ընդմիշտ տրված ու հաստատագրված հասկացությունից օգտվում է բոլոր դարաշրջանների համար։ Օրինակ, ըստ Հ. Մանանդյանի, «նախարար» հասկացությունը — դա ժողովրդի վեհապետն է կամ ցեղապետը. «ազատ» հասկացությունը՝ ցածր ազնվականներ. «ոստան» հասկացությունը՝ պետությանը պատկանող քաղաք կամ երկիր և այլն։ Ակներև է, որ տերմինների մեկ ընդմիշտ սահմանված ու հաստատագրված, այսպես ասած՝ «անփոփոխ» հասկացությամբ գործառելը ճիշտ չէ։ Հասկացությունների՝ բառերով արտահայտված բովանդակությունը, տերմինների բովանդակությունը, պատմականորեն անփոփոխ չէ. նա ենթակա է էվոլյուցիայի և անընդհատ փոփոխության։ «Նախարար» տերմինը որևէ տրված դարաշրջանում կարող էր նշանակել «ցեղապետ» կամ «ժողովրդի վեհապետ», իսկ մի ուրիշ դարաշրջանում՝ բոլորովին մի այլ բան։ «Ոստան»-ը, որպես տերմին, գուցե և որոշ դարաշրջանում նշանակել է «քաղաք» կամ «երկիր», բայց ավելի վաղ ժամանակներում կամ հետագայում նա կարող էր բոլորովին այլ նշանակություն ունենալ։ Հին հունարեն—δεσπότης—բառը նշանակում էր «տէր», «տիրապետող», մինչդեռ հետագայում այդ տերմինը բոլորովին այլ նշանակություն է ստացել։ Գիտության մեջ պարզված է, որ տերմինների բովանդակությունն ու նշանակությունը ենթակա են անընդհատ էվոլյուցիայի ու ձևափոխման։ Ուստի մեթոդոլոգիապես ճիշտ չէ ելնել տերմինների մեկ ընդմիշտ տրված և հաստատագրված հասկացությունից։

Չորրորդ։ Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգերի պրոբլեմներն ուսումնասիրող հեղինակները քննարկում են նաև հայկական պետության գենեզիսի, նրա պատմական հասակի հարցը և այլ հարցեր։

Ուսումնասիրողներից Երեմյանը, որի հայացքները Հայաստանում ստրկատիրական սիստեմի գոյության պրոբլեմի վերաբերյալ ամենից ավելի ճիշտ են, պնդում է՝ «Մեր կողմից մեկնաբանվող ժամանակաշրջանում կային բոլոր նախադրյալները՝ հայկական պետություն ստեղծելու համար»[1]։ Այս միտքը հեղինակը կրկնում է նաև իր մյուս աշխատություններում։

Հայկական պետության հասակի և ծագման ժամանակի այդպիսի ըմբռնումը մենք համարում ենք մոլորություն։ Հայկական պետությունը հանդիսանում է երկրագնդի վրա ամենահին կազմավորումներից մեկը։ Կան և գոյություն ունեն պետական իշխանության հասկացություն նշանակող տերմիններ, որոնց պատմական հասակը չափվում է հազարամյակներով. այսպես, օրինակ «պետ», «իշխել», «տէր», «հպատակ» և այլն։ Այդ և դրանց նման իրավական հասկացությունների գոյությունն ապացուցում է հայկական պետության հնագույն ծագումը, այնքան խորը-հին, որ նրա գենեզիսը հելլենիստական դարաշրջանին դասելը առնվազն անհիմն է։

[1] *С. Еремян*, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, „Известия АН Армянской ССР", 1948, № 11, стр. 42.

Խեթական պետության սիստեմում մեր թվականությունից առաջ XIII—XV դարերում, ինչպես այդ երևում է պրոֆ. Գ. Հափանցյանի[1] բերած տվյալներից, արդեն գոյություն ուներ հայկական պետություն։ Նա գործում էր նաև հոմերյան հասարակության դարաշրջանում, այսինքն մեր թվականությունից 1000 տարի առաջ[2]։ Երեմյանը մի այլ տեղ ընդունում է, որ խեթական, խուրրո-ուրարտական և սեմական (ասուրա-բաբելական) աշխարհի սահմանագծում սկսվել է հայ-հայասինների ցեղերի համերաշխության նոր պրոցես[3]։ Կարող են առարկել, որ «համերաշխությունը» կամ ցեղերի «միավորումը» պետություն կամ որևէ պետական կազմավորում չէ։ Նմանօրինակ առարկությունը հիմնված կլինի թյուրիմացության վրա։ Ցեղերի «միավորումը» չի կարող դիտվել որպես ֆիզիկական կապվածություն, կապվածություն թոկերով կամ ճոպաններով. այդ «միավորումը» իրենից ներկայացնում է փոխկապվածություն տնտեսական և քաղաքական հողի վրա։ Սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավահարաբերությունների բազայի վրա եղած նմանօրինակ միավորումն էլ հենց, ինչպես մեզ թվում է, պետական կազմավորում է հանդիսանում։ Այս ասպեկտով էլ պետք է ընդունել, որ հայկական պետությունը, «երիտասարդ» չլինելով հանդերձ, ունի ոչ պակաս, քան երեք հազարամյա հասակ։

Տնտեսական կարգերն ստեղծում են իրենց իդեոլոգիան։ Նրանք արտացոլվում են իրավական և քաղաքական սիստեմում, էթնիկայի մեջ, ժողովուրդների բարոյական և կրոնական հայացքներում, ուստի Հայաստանում ստրկատիրական սիստեմի գոյության տվյալների ու ապացույցների առաջին և առավել ճիշտ աղբյուրը հանդիսանում են համապատասխան դարաշրջանն արտացոլող իրավաբանական հնությունները կամ սովորութական իրավունքի ցուցմունքները։

Հայ ժողովրդի, որպես հնագույն ժողովուրդներից մեկի, սովորութական իրավունքը իր բովանդակությամբ առավել հարուստ է, ցուցադրական և բարդ, որովհետև այդ իրավունքն արտացոլում է ժողովրդի սոցիալ-տընտեսական և էթնիկական փորձը, որը ամբողջ հազարամյակների ընթացքում խտացված է նրա նորմատիվներում և սանկցիաներում։ Բայց, տարբախտաբար, հայ ժողովրդի սովորութական իրավունքը և նրա իրավաբանական հնությունները ուսումնասիրված, հավաքված և համակարգված չեն։ Այդ իրավունքի վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը չափազանց նայիվ է, գիտականորեն չմշակված և, որպես այդպիսին, արժեքավոր ոչինչ չի տալիս։

Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ մենք ունենք սովորութա-իրավական նորմավորման ինստիտուտ, որը մինչև վերջին ժամանակները՝ մինչև XX դարի սկիզբը գոյություն ուներ ժողովրդի մեջ։ Այդ ինստիտուտի անունն է «մշակություն»։ Խոսքը «մշակ» տերմինի մասին չէ, որի մեկնաբանությամբ զբաղվել են մեր ուսումնասիրողները (ինչպես, օրինակ՝ Երեմյանը և ուրիշները)։ Մենք այստեղ խոսում ենք գործուն իրավական ինստիտու-

[1] Տե՛ս Г. Капанцян, Хайаса—колыбель армян, Ереван.

[2] Տես մեր „Элементы армянской культуры и этники в гомеровской системе" դիսերտացիոն աշխատությունը։

[3] С. Еремян, К вопросу об энтогенезе армян, „Вопросы истории", 1952, № 7, стр. 101 и сл.:

տի մասին, որն ունի հազարամյակների վաղեմություն և, որպես գերապրուկ, կենդանի է մնացել ու մինչև վերջին ժամանակները պահպանում էր իր ուժը հայկական գյուղերի ժողովրդական կենցաղում։ Այդ ինստիտուտի գծով տնտեսական շահագործման սուբյեկտ է «մշակը», որի իրավական և սոցիալական դրությունը վերարտադրում է հին Հայաստանում շահագործվող ստրուկների դրությունը։ Գյուղում հարուստները իրենց տնտեսության մեջ ունեին մեկական, երկուական և նույնիսկ երեքական «մշակներ», որոնց նրանք կերակրում և հագցնում էին և որոնք աշխատում էին տիրոջ համար։ Ապրելով տիրոջ հետ միասին և ենթարկվելով նրա կարգադրիչ իշխանությանը, պայմանով, որ տերը նրանց կօգտագործի իր հայեցողությամբ և ինչպես կամենա (uti et abuti), նրանք կատարում էին դաշտային բոլոր աշխատանքները, հավաքում. կալսում էին բերքը, աշխատում էին ջրաղացներում ու արհեստանոցներում (օրինակ՝ փականագործական արհեստանոցներում), և այդպիսով, հավելյալ արժեք ստեղծելով արտադրության մեջ, համատարած շահագործման առարկա էին հանդիսանում։ Նրանց մուտքը տիրոջ տունը ուղեկցվում էր որոշ արարողությամբ. «մշակին» հանգստյան կամ հիվանդության ժամանակ նրան սպասարկում էր ինքը՝ տերը կամ նրա ընտանիքը։ Երբեմն «մշակը» ամուսնանում էր իր բարի տիրոջ թույլտվությամբ։ «Մշակների» դրության սովորութա-իրավական նորմավորումը և «մշակության» ինստիտուտի անագան ֆունկցիոնալ գործողությունը լիովին հաստատում են այն թեզը, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել ստրկատիրական սիստեմ, որովհետև նկարագրված իրավական մնացուկը այս սիստեմի կենդանի մնացորդն է,

Իդեոլոգիական նշանակություն ունեցող մի շարք իրավաբանական հասկացություններ սկիզբ են առել ու զարգացել են ստրկության պայմաններում և ստրկության ռեժիմը տարածել են ռազմական գերիների վրա։ Հայերեն «պարտք» բառը գենետիկորեն նշանակում է «գերի», «պայքար», «պատերազմ», «հաղթության արդյունք»։ Դրա „vardum" համարժեքը Համմուրաբիի օրենքների լեզվով կոչվում է «ստրուկ»։ Հայերեն «պարտականություն» բառը ունի իր լատիներեն համարժեքը obligatio = կապակցականություն։ „Obligo" — կապել, մեղսագրել, դատապարտել։ Prometheus obligatus alite, Պրոմեթեոսը դատապարտված՝ որպես զոհ թռչնին։ Ըստ Դալի՝ «պարտականություն» նշանակում է «կապել», «բռնադատել»։ Ստրկատիրության հետ կապված հայերեն իրավաբանական «տէր» հասկացությունը համապատասխանում է հունական „τυραννος" և լատինական „tiranus" բառերին, որ նշանակում են «տիրակալ», «իշխանություն ունեցող», «ընտանիքի գլխավոր»։ Այն հասկացությունները, որոնց մեջ արտահայտված են իշխանություն, կապակցվածություն և այլն, հայտանշում են ստրկացված ռազմագերիներ և տիրոջ իշխանությունը նրանց վրա։

Մենք ունենք ոչ սակավաթիվ գրավոր հուշարձաններ, որոնց մեջ ակնհայտորեն արտացոլված է ստրկատիրական սիստեմը։ Որանցից իր հասարակական նշանակությամբ ամենախոշորը, իհարկե, հանդիսանում է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, որը, դժբախտաբար, մինչև այժմ ինչպես հարկն է գիտականորեն չի ուսումնասիրված։ Հին հայկական իրավունքի այս կոթողը նույնպիսի նշանակություն ունի, ինչպես „Русская правда"-ն, «Մանուի օրենքները», «Մովսեսի օրենքները», «Համմուրաբիի

օրենքներրդ, «Խեթական օրենքներրդ և այլն։ Այդ բոլոր կոդեքսների նման, Մխիթար Դոշի Դատաստանագիրքը վերարտադրում է գլխավորապես հայկական սովորութական իրավունքի հիմնական դրույթները։ Այդ երևում է նրա ներածությունից, որտեղ մեծ հեղինակը անկեղծորեն խոստովանում է, որ ինքը Դատաստանագրքի մեջ հավաքել է այն, ինչ անձամբ տեսել և լսել է։ Բացի դրանից, Դատաստանագրքում միաձուլված են (տարբերակված չեն) դատավարական և նյութական իրավունքի նորմաները, մի հանգամանք, որ հատուկ է միայն սովորութա-իրավական սիստեմին։ (Այս հատկանիշը բնորոշ է նաև «Համմուրաբիի օրենքներից» և հոմերյան դյուցազներգության իրավական տվյալների համար)։ Օրենսգիրքն սկսվում է աստվածաբանական սկզբունքի և սակրալ իրավունքի շարադրանքով, որ նույնպես համապատասխանում է «Համմուրաբիի օրենքներից» կոմպոզիցիային և հոմերյան իրավագիտակցությանը։ Դժվար է համաձայնել այն տեսակետի հետ, թե իբր Դատաստանագիրքը արտացոլում է հայկական ֆեոդալիզմի իդեոլոգիան[1]։ Կարելի է ապացուցել, որ Դատաստանագրքի դատավարական և նյութական նորմաների մի զգալի մասը, լինելով սովորութական իրավունքի արտահայտություն, ունի հնագույն ծագում։ Ուստի և հասկանալի է, որ Դատաստանագրքում արտացոլվել է հին Հայաստանի ստրկատիրական սիստեմը։ Այն բոլոր հոդվածները, որոնք նորմավորում են ստրուկների դրությունը, նրանց պատասխանատվությունը դատարանի առջև, նրանց դեմ ուղղված պատժական սանկցիաները, նրանց զանցանքների ու հանցագործությունների մեկուսացումը, նրանց դրությունը ամուսնական իրավունքի սիստեմում, նրանց փախուստի դեմ ուղղված սանկցիաները, — այս բոլորը ակնհայտորեն վկայում են ստրկատիրական սիստեմի մասին։ Դատաստանագիրքը սահմանում է մի շարք ինստիտուտներ, որոնք հատուկ են միայն ստրկատիրական հասարակությանը։ Մխիթար Դոշի Դատաստանագրքի առկայությունն անկասկած է դարձնում, որ հին Հայաստանում գոյություն է ունեցել ստրկատիրական սիստեմ։

Կարելի էր շատ ավելի բազմաթիվ փաստարկումներ բերել ապացուցելու համար այն թեզը, որ, հիրավի, հնադարյան Հայաստանում եղել և գործել է ստրկատիրական սիստեմը և որ այդ սիստեմի մնացուկները տակավին մնում են հայոց սովորութական իրավունքի դեռ չվերացած բեկորների մեջ, սակայն առայժմ բավականանանք վերոհիշյալով։ Սոցիալական ֆորմացիաների հաջորդական ուղիները հետազոտող գիտնականը չի կարող մեր սովորութական իրավունքի բեկորներին կես աչքով նայել, թերակարծ լինել դրանց արդյունալի էության մասին։

---

[1] Հմմտ. Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, էջ 358։